ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան

Հայկ նահապետ

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

Հայկ նահապետ (նաև **Հայկ թագավոր**[1], **Հայկ դյուցազուն**, **Հապետոսթյան Հայկ**), լեգենդար հերոս, հայոց անվանադիր նախնին: Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» աշխատությունում գրի առնված ավանդազրույցում նրան անվանում է նախահայր: Համածայն Աստվածաշնչի՝ Հայկը Հաբեթի սերունդներից էր և այդ պատճառով երբեմն անվանվում է Հաբեթոսյան Հայկ:

Ըստ Մովսես Խորենացու, Հայկը սերում է Նոյի կրտսեր որդի Հաբեթից, Հայկը Նոյի 5-րդ սերունդն է:

Մ. Խորենացին «Հայոց Պատմություն»-ում գրում է, որ Հայկը ապստամբեց Բաբելոնի տիրակալ Բելի (Belus/Belos) դեմ, Վանա լճի մոտ Հայկը պատերազմեց Բելի դեմ, ջարդեց նրա զորքը, սպանեց նրան ու դրեց հայոց պետության հիմքը, ըստ այդմ՝ մեր երկիրը կոչվեց Հայք:

11-րդ դարի վրաց պատմիչ Լեոնտի Մրովելուին վրացիների ծագումը ներկայացնելիս ճշում է որ, Հայկը որդին է Թորգոմի: Ըստ նույն պատմիչի՝ Թորգոմը ուներ 8 զավակ: Կովկասյան բոլոր ժողովուրդները, ըստ նրա, սերում են Թորգոմի զավակներից, նրանց մեջ առաջինը հայերի նախահայր Հայկն է, երկրորդ զավակը վրացիների նախահայր Քարթլոսն է (Kartlos), ապա՝ ապխազների և մյուսների: Վրացիները Հայաստանը անվանում են Սամխեթի (Սոմխիթի): Այս եզրույթը վրացի և հայ ուսումնասիրողները լուրջ ուսումնասիրել են, սակայն նրանց եզրակացությունները բավարար չեն և համահունչ չեն ինչպես Մովսես Խորենացու, այնպես էլ Լեոնտի Մրովելիի կողմից հիշատակվող Հայկ/Հայոս անվան և Հայաստան երկրի անվան ծագման ավանդաբանության հետ:

Հայկի նախնիները (աստվածաշնչյան տեսակետ)

Ըստ Աստվածաշնչի Հայկը Նոյի հինգերորդ սերունդ է: Համածայն 9-րդ դարի վրացի պատմիչ Լեոնտի Մրովելու «Քարթլիս Ցխովրեբա » «վիրաց թագավորների պատմության» Թորգոմը ուներ ութ զավակ Գաոս-Հայկ, Քարթլոս-Վրացի,Բարդոս-Ավար,Մովսական-Ուդին,Լեկոս-Լեզգին,Էրոս-Դարգին, Կավկաս-Նախ,Էգրոս-Աբխազ:



Բնութագրում

Հայկը վայելչակազմ էր,թիկնավեհ, գեղազանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա հաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, ովքեր ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու:

Հայկ և Բել

Հիմնական հոդված՝ Հայկ և Բել

Հայկ թագավորի կյանքի հայտնի դրվագներից է նրա պատերազմը բաբելոնյան առաջնորդ Բելի դեմ: Բաբելոնյան ուստարպաբիհության խառնաձփոթի ընթացքում Տիտանյան Բելը ինքն իրեն հռչակում է աբխարհակալ և պարտադրում այլոց պաշտել իրեն: Սակայն Հայկը չի ճանաչում Բելի ինքնակոչ իշխանությունը իր հարազատները և ցեղակիցները նույնպես: Ըստ Մովսես Խորենացու՝ Բաբելոնում իր անդրանիկ զավակի՝ Արամանյակի (Արմենն) ծնվելուց հետո Հայկը երբէ հարյուր այլ ցեղակից ընտանիքների հետ միասին վերադաձնում է Հայք: Հայրենիք ժամանելուն պես, Հայկը բնակություն է հաստատում Տուրուբերանի Հարք գավառում: Հարք անունը մեկնաբանվում է որպես «հայրեր»,; Այդ ընթացքում Բելը, դատելով Առաբեստանի տիրակալ, մեծ բանակով ներխուժում է Հայք: Հայկի բռն Կարմրաս, որը բնակություն էր հաստատել Հայկական լեռնաշխարհի հարավում՝ Կորճայքում, Արարատ լեռան ստորոտում, զգուշացնում է Հայկին Բելի արշավանքի վերաբերյալ: Հայկը իր բազմաթիվ զավակներով և թոռներով Հայկաշենից մեկնում է (Վանա լճի հյուսիսային ափի եզրով) դեպի այժմյան Վան բաղաքը: Վանից հարավ ընկած Հայոց Ձոր կոչվող գետի հովիտում Հայկը և Բելը իրենց բանակներով դուրս են գալիս միմյանց դեմ: Հայկն իր բանակը դասավորում է եռանկյունաձև գետի հյուսիսային (աջ) ափին, աջից և ձախից տեղադրելով իր ավագ որդուն և թոռանը՝ Արամանյակին և Կարմոսին: Սակայն Բելը, տեսնելով իր զորքի սակնայտ բանակական առավելությունը, Հայկի փոքրաթիվ ռազմիկների համեմատ, հրամայում է իր զինվորներին ամբոխով անցնել գետը և հարձակվել Հայկի և իր զորախմբի վրա: Իրնբ Բելը խուսափում է մարտից, փախաբերը բարձրանալով մի բլրի վրա, որտեղից հետևում է մարտին:

Ճակատամարտի ամենաթեժ պահին, Հայկը նկատում է Բելին բլրի վրա, անցնում է գետը և եռաթև նետով նետահարում է նրան: Քանի որ Հայկի նետը երկաթե ծայր ուներ, իսկ Բելի լաթերը պղնձե էին, Հայկի արձակած նետը անցնում է Բելի լաթերի միջով և մեխում նրան գետնին: Տեսնելով Բելի մահը՝ նրա զորքը սարսափահար փախուստի է դիմում:

Հայկը հրամայում է ռազմադաշտի մոտ կառուցել ամրոց, որը անվանում է Հայկաբերդ: Այդ ամրոցի մնացորդները պահպանվել են մինչ օրս: Բելի դիակը Հայկը հրամայում է տանել Հարք և, թաղելով Հայկաշենից ոչ հեռու, բլուր դարձնել նրա գերեզմանը՝ ի զգուշացում բոլոր օտարների, ով կհանդգնի հարձակվել Հայկի հայրենիքի վրա: Այս հաղթանակից հետո ապրելով երկար տարիներ, Հայկի արձը (հոգին) համարձակվում է երկինք և դառնում Օրիոն համաստեղությունը, որը հայերը անվանում են Հայկի համաստեղություն:

Առասպելաբանություն

Ըստ որոշ հեղինակների՝ չնայած որոշ առասպելական դրվագների, Հայկի մասին պատմությունը հիմնված է իրական պատմական իրադարձությունների վրա և արտացոլում է վաղ, դեռևս նահապետական հայկական ցեղախմբերի պատերազմները հյուսիսային Միջագետքից Հայկական լեռնաշխարհ ներխուժող ցեղերի դեմ: Բացի այդ, Հայկի անունը և առասպելացված արարքները հիշատակվում են նաև արևմտաիրանական ցեղերի մոտ և գտել են իրենց արտացոլումը Ավեստայում Հայոշանգ (Հուշանգ) անվան տակ:

Ժառանգներ

Ըստ Մովսես Խորենացու և այլ հայ պատմագիրների՝ Հայկից է սերում Հայկազունիների արքայատոհմը: Այդ ազնվական հարստության վերջին ներկայացուցիչը՝ Վահե արքան զոհվեց Գավգամելում, Հայրն Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից պաշտպանելիս:

«Հաբեթի սերունդների Ցանկը սահմանել և առաջադրել է Մովսես Խորենացին, որպես Հին Կտակարանի ազգաբանության ցանկերին այլընտրանք, բանզի, Պատմահայրը բողոքում է. «ս. գիրքս յուրայիններին (հրեաներին. հեղ) զատելով իբրև իր սեփական ազգ՝ մյուսներին լռեց, իբրև արհամարհելի և իր կողմից ճշանակվելու անարժան...(հավելելով) մեր Հաբեթի սերունդները բոլորովին չկան»: Խորենացին առաջադրել է սեփական՝ Նոյի Հաբեթ որդու ազգաբանության Ցանկ, հավելելով, որ այն ավելի հավաստի է, բան Ծննդոց բաժնի ցանկերը, բանի որ այնտեղ Հաբեթի սերունդները բացակայում են(*Մ. Խորենացի, ՀՊ*, էջ՝ 77-78): Ի տարբերություն իրենից առաջ և հետո պատմությունների գրող պատմիչների, Պատմահայրը ազնվորեն թվարկում է, բե Հաբեթի ազգաբանությունը ճշտելիս, ինքը ինչ տարբերություններ է օգտվել՝ Աբյուդենոս, Կեփալոնոս, հունարեն գրականություն, իսկ Հին Կտակարանի Ծննդոց բաժնի ազգանության ցանկերը որևէ հավաստի տարբերություն չունեն: Սկսած Խորենացուց, մեր բոլոր պատմիչները անփոփոխ են թողել «Հաբեթից սկսվող ազգաբանության», այդ թվում «Առաջին հայկյանների»՝ Հայկից մինչև Արա Գեղեցիկ» Հայկազունի առաջնորդների Ցանկը:
Ըստ Խորենացու մի շարք հայոց ազնվական տոհմեր իրենց ակունքների սկիզբ են համարում Հայկ Նահապետին: Դրանցից են Բզնունիները, Խորխոռունիները, Մանդակունիները, Վահևունիները, Վարաժնունիները, Առանձաձիկները և այլն: Ժամանակակից գիտնականների մի մասը այլևս հրաժարվում է դիտարկել Հայկին որպես զուտ առասպելական անձ և հակված է ներկայացնել նրան որպես հայոց հերթական թագավոր, ով մեծ ավանդ է ունեցել հայկական արժեհամակարգի պահպանման և տարածման գործում[2]:

Տես նաև

- Հայկազունիներ
- Հայկ և Բել
- Բել

Ծանոթագրություններ

1. «Պարիս Մ. Հերունի, Հայերը և հնագույն Հայաստանը (Հիմքերը հայոց): Արխեաստղագիտություն: Լեզվաբանություն: Հնագույն պատմություն, Երևան, Տիգրան Մեծ, 2006 թ., 320 էջ.» (https://web.archive.org/web/20150426125850/http://giteliq.am/pdf/Paris-Herouni-Hayer@-ev-Hnaguyn%20Hayastan@.pdf): Արխիվացված է օրիգինալից (http://giteliq.am/pdf/Paris-Herouni-Hayer@-ev-Hnaguyn%20Hayastan@.pdf) 2015-04-26-ին: Վերցված է 2014-09-20
2. Պ.Մ.Հերունի, *Հայերը և հնագույն Հայաստանը*, Երևան 2006 թվական

Արտաքին հղումներ

- Հայկ թագավորը (http://gardmanq.do.am/news/hayk_t_39_agavor/2014-02-06-7)

Դ·Ք·Խ (https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B1%D5%A8%D5%BD%D5%BF_%D5%A9%D5%A5%D5%B4%D5%A1%D5%B5%D5%AB&action=edit) [Բացել]
Դ·Ք·Խ (https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%B2%D5%A1%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80&action=edit) [Բացել]
Դ·Ք·Խ (https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%AB%D5%B6_%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%AB%D6%81%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6&action=edit)

Այս հոդվածի կամ նրա բաժնի որոշակի հատվածի սկզբնական կամ ներկայիս տարբերակը վերցված է Քրիէյթիվ Քոմմոնս Նշում-Համանման տարածում 3.0 (Creative Commons BY-SA 3.0) ազատ թույլատրագրով բաշխվող Հայկական սովետական հանրագիտարանից (հ. 6, էջ 166)։ BY-SA

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Հայկ_նահապետ&oldid=8653350» էջից

Հայկ Նահապետ

Հայրի հիմնադիր արքա

Հաջորդող	Արամանյակ
Տոհմ	Հայկազունիներ
	գերիշխան
Հայր	Թորգոմ
Երեխաներ	Արամանյակ, Մահավազ Հայկազունի, Ապան Հայկազունի, Մեհեկան, Բազոց, Խոռ Հայկազունի և Aram?